ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԿԱՆՏԻ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հումանիզմի գաղափարներն ուրույն արտահայտություն գտան գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր ***Իմանուիլ Կանտի*** (1724-1804) ստեղծագործության մեջ: Կանտի փիլիսոփայության առավել բնորոշ հատկանիշը հումանիստական ուղղվածությունն է, նրա ողջ փիլիսոփայական պրոբլեմատիկայում մարդու հիմնահարցի բացառիկ տեղը:

Ինքնատիպ է մարդու մասին Կանտի ուսմունքը: Ըստ նրա՝ «մարդը գլխավոր առարկան է աշխարհում», և մնացած աշխարհից նրան բարձրացնում ու վեհացնում են ինքնագիտակցությունը և աշխարհը ճանաչելու հզոր միջոցի՝ բանականության հնարավորությունները: Նրա մոտ մարդու պրոբլեմը, «ի՞նչ է մարդը» հարցը ձևակերպված է որպես փիլիսոփայության հիմնական հարց, իսկ փիլիսոփայության բարձրագույն կոչումն է՝ ամեն կերպ նպաստել անհատի մտավոր ու բարոյական ինքնորոշմանը, նրա կատարելագործմանը: Այս առումով հատկանշական է, որ Կանտը, ասես, չբավարարվելով մարդու պրոբլեմի վերաբերյալ երկարամյա ու հիմնարար հետազոտություններով և ամենից առաջ «Զուտ բանականության քննադատությունը» աշխատության մեջ (1781) առաջադրված երեք նշանավոր հարցերով (1. ի՞նչ կարող է իմանալ մարդը, 2. ի՞նչ կարող է անել մարդը, 3. ի՞նչի վրա կարող է հույս դնել մարդը), արդեն իր կյանքի վերջին շրջանում դրանց ավելացնում է նաև չորրորդը՝ գլխավոր հարցը, այն է՝ **ի՞նչ է մարդը**:

Ելնելով մարդու՝ որպես երկու տարբեր աշխարհների պատկանող էակի, դուալիստական ըմբռնումից, որոնցից մեկը բնական անհրաժեշտությունն է, մյուսը՝ բարոյական ազատությունը, Կանտը անտրոպոլոգիան բաժանում է «կենսաբանականի» և «պրագմատիստականի»: Առաջինը հետազոտում է այն, թե «...մարդուց ինչ է պատրաստում բնությունը...», երկրորդն ուսումնասիրում

է այն, թե «...նա, որպես ազատորեն գործող էակ, ինչ է անում կամ ինչ կարող է և պետք է անի.. »[1]:

Մարդու մասին Կանտի ուսմունքի առանցքը մարդու ներդաշնակ զարգացման խնդիրն է: Կանտին հետաքրքրում է մարդու էության, նրա մտավոր, գեղարվեստական ու բարոյական պոտենցիաների բացահայտման ու զարգացման հարցը: Անգլիական լուսավորիչների նման նա խստորեն չի սահմանազատում մարդու բարոյական ու գեղագիտական զգացումները: Բարոյագիտականի ու գեղագիտականի փոխհարաբերության հարցի քննության ընթացքում երևան է գալիս հատկապես ֆրանսիական լուսավորիչների, ամենից առաջ Ռուսոյի անմիջական ազդեցությունը, մտածող, որի նկատմամբ Կանտը տածում էր հատուկ հարգանք: Մարդկային ուժերի ներդաշնակ զարգացման ուղիների որոնումների մեջ նա ձգտում էր հասնել գեղագիտականի ու բարոյագիտականի մերձեցմանը, նրանց միասնության հաստատմանը:

Խոր հումանիզմով է ներթափանցված հատկապես Կանտի բարոյագիտական ուսմունքը, որը հիմնականում շարադրված է նրա գլխավոր էթիկական ստեղծագործության՝ «Պրակտիկ բանականության քննադատությունը» (“Kritik der praktischen Vernunft», Riga, 1788) աշխատության մեջ[2]:

---

[1] **Кант И.** Соч., т. 6, М., 1966, стр. 351.

[2] Կանտի այս աշխատությունը հսկայական ազդեցություն թողեց ինչպես իր ժամանակակից, այնպես էլ հետագա սերունդների փիլիսոփաների վրա: Այս առումով բնորոշ է Ենայի համալսարանում Կանտի փիլիսոփայության գիտակ ու ջատագով Կ.Լ.Ռեյնհոլդի օրինակը, ով առաջինը և մեծ խանդավառությամբ արձագանքեց դրա հրատարակմանը: Ահա թե նա, հիացմունքի ու երախտագիտության խոսքերի հետ մեկտեղ, ինչ է գրում Կանտին ուղղված իր նամակում՝ ի պատասխան նրանից որպես ընծա ստացած «Պրակտիկ բանականության քննադատությունը» գրքի ու դրան ուղեկցող նամակի. «Ինչ լավ է, որ ես իմ «Briefen über die Kantische Philosophie» («Նամակներ կանտյան փիլիսոփայության մասին» – Գ.Ա.) երկի մեջ մինչև այժմ չեմ շոշափել **իմացության բարոյական հիմքի** խնդիրը: Ես կվառեի ընդամենը մեկ մոմ այնտեղ, որտեղ Դուք «Պրակտիկ բանականության քննադատությամբ» բոցավառեցիք մի ամբողջ արեգակ» (**Кант И.** Критика практического разума, перевод с немецкого Н.М.Соколова, Издание второе, исправленное и дополненное, С.-Петербург, 1908, стр. I):

Իսկ ավելի ուշ Կանտի փիլիսոփայության մեկ այլ նշանավոր գիտակ ու նվիրյալ Կարլ Ֆորլենդերը (1862-1928) Կանտի «Պրակտիկ բանականության քննադատությունը» գրքում զետեղված իր հոդվածում գրում է. «Կանտը, հիրավի, դարձավ էթիկայի Նյուտոնը: Ինչպես որ «Philosophie naturalis principa mathematica»-ի («Բնական փիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքները» (1684) – Գ.Ա.) հեղինակը մաթեմատիկական բնագիտությանը, այնպես էլ Կանտը մորալին տվեց այն մեթոդական հիմնավորումը, որը միայն հավերժություն է խոստանում...» (**Кант И.** Критика практического разума, стр. XVII):

Կանտի բարոյագիտական ուսմունքի առավել բնորոշ կողմերից մեկը նրա այլասիրական (ալտրուիստական) բնույթն է: Մերժելով մերկ եսասիրությունը և հանդես գալով սեփական շահը ամեն ինչից վեր դասելու և այն անհատի կամքի ու գործողությունների հիմքում դնելու գաղափարի դեմ՝ Կանտը գտնում էր, որ «բարոյականության սկզբունքի ուղղակի հակադրությունը կլիներ, եթե սեփական երջանկության սկզբունքը դառնար կամքի որոշման հիմք»[3]: Նույն միտքն է խտացված Կանտի «Աջակցիր ուրիշների երջանկությանը»[4] պահանջի մեջ: Կանտի բարոյագիտական ուսմունքի ելակետը Ռուսոյի գաղափարների ազդեցությամբ ձևավորված այն համոզմունքն է, որ մարդն ինքնանպատակ է, որ նրան պետք է դիտել որպես նպատակի և ոչ թե որպես որևէ նպատակի իրականացման միջոցի, որքան էլ այդ նպատակը շատ հետապնդի համընդհանուր բարօրության խնդիրներ:

«Ամբողջ արարման մեջ ամենայն բան, ինչ որ կա և ինչի համար որ կա, նշանակություն ունի **սոսկ որպես միջոց**: Սակայն մարդը, իսկ նրա հետ նաև ամեն մի բանական էակ՝ **նպատակ է ինքն իր մեջ**: Դա հենց բարոյական օրենքի սուբյեկտն է, որը սուրբ է արդեն իր իսկ ազատության ավտոնոմիայի բերումով»[5]:

Մարդասիրական գաղափարն է ընկած նրա «զուտ գործնական բանականության» հիմնական օրենքի՝ այսպես կոչված «կատեգորիկ իմպերատիվի» հիմքում: Համաձայն նրա բարոյագիտական ուսմունքի, եթե բարոյական հիմնական օրենքի ձևակերպման մեջ անպայմանորեն մատնանշվի բարոյական գործողության կոնկրետ բովանդակությունը, ապա այդ դեպքում բարոյական օրենքը չի կարող ստանալ անպայմանորեն համընդհանուր և անպայմանորեն անհրաժեշտ նշանակություն: Նման օրենքի պահանջն այդ դեպքում կլինի միայն ձևական, պայմանական, մինչդեռ իսկական բարոյականությունը պահանջում է, որ այն լինի անպայմանական, բացարձակ պահանջ՝ «կատեգորիկ իմպերատիվ»[6]: Բարոյական իսկական օրենքը, ըստ

---

[3] **Кант И.** Критика практического разума, С.-Петербург, 1897, стр. 45.

[4] Նույն տեղում, էջ 44:

[5] **Кант И.** Критика практического разума, Издание второе, исправленное и дополненное, С.-Петербург, 1908, стр. 92.

[6] «Կատեգորիկ իմպերատիվը» Կանտի էթիկայի հիմնական օրենքն է: «Երկու բան միշտ նոր զարմանքով ու երկյուղածությամբ են լցնում մեր սրտերը: Եվ նրանք այնքան ավելի վեր են բարձրանում, որքան որ ավելի հաճախակի ու տևականորեն է նրանցով զբաղվում մեր միտքը: Դրանք են՝ **աստղազարդ երկինքը մեր վերևում և բարոյական օրենքը մեր մեջ**» (**Кант И.** Критика практического разума, Издание второе, исправленное и

Կանտի, պահանջում է, որ ամեն մի անհատ, անկախ իր գործողությունների բովանդակությունից, վարվի այնպես, որ նրա անձնական վարքագծի կանոնը կարողանա դառնալ վարքագծի կանոն բոլորի համար. «Վարվի՛ր այնպես, որ քո կամքի կանոնը միշտ կարողանա դառնալ համընդհանուր օրենսդրության սկզբունք»[7], մի՛ արա ուրիշին այն, ինչ դու ցանկալի չէիր համարի քեզ համար: Դրա հետ մեկտեղ Կանտը ձգտում էր խստորեն սահմանազատել բարոյական պարտքի գիտակցումը բարոյական օրենքի պահանջների կատարման նկատմամբ զուտ զգայական, էմպիրիկ հակումից: Եթե դեպի բարոյական օրենքի պահանջների հետ համընկնող գործողությունը քեզ մղում է քո բնական հակումը, ապա այդպիսի արարքը, ըստ Կանտի, չի կարող դիտվել իբրև բարոյական արարք: Արարքը կարող է բարոյական համարվել միայն այն դեպքում, երբ այն կատարվում է բարոյական օրենքի պահանջների ճիշտ գիտակցմամբ ու նրա նկատմամբ հարգանքի մղումով: Կանտի կարծիքով դա հատկապես վառ կերպով արտահայտվում է այնտեղ, որտեղ հանդես է գալիս բախում՝ դեպի բարոյական գործողությունը մարդու արտաքին, զգայական հակման և այն արարքի միջև, որը կատարվում է «մաքուր» մղումով՝ բարոյական օրենքի նկատմամբ պարտքի գիտակցման ուժով: Նման դեպքերում նա պահանջում էր նախապատվությունը տալ բարոյական գործողությանը և անվերապահորեն կատարել բարոյական օրենքի պահանջները:

Սակայն «կատեգորիկ իմպերատիվը», ըստ Կանտի, իր կարևորությամբ հանդերձ՝ կրում է վերացական բնույթ, քանզի սրան կարող են համապատասխանել ամենատարբեր պահանջներ ու պոստուլատներ՝ կրոնական պատվիրաններ, կյանքի իմաստություններ և այլն: Այդ պատճառով նա ներմուծում է «կատեգորիկ իմպերատիվի» կարևորագույն կոնկրետացումը՝ այսպես կոչված «պրակտիկ իմպերատիվ» հասկացությունը, որի պահանջն է՝ վարվի՛ր այնպես, որպեսզի մարդկությունն ի դեմս քեզ, ինչպես որ ի դեմս յուրաքանչյուր ուրիշի, հանդես գա որպես նպատակ և երբեք՝ ոչ որպես միջոց: «Պրակտիկ իմպերատիվը», ըստ Կանտի, մարդուն հռչակելով նպատակ, այլ ոչ թե միջոց, բացառում է նրա՝ ինչպես որ ամբողջությամբ վերցրած մարդկային ցեղի

дополненное, С.-Петербург, 1908, стр. 165-166): Այս խոսքերով է սկսում Կանտն իր «Պրակտիկ բանականության քննադատությունը» երկի եզրափակիչ մասի՝ «Եզրակացության» շարադրանքը, և դրանք, կարծես, բնաբան լինեն «Եզրակացության» համար, թեև այս խորիմաստ այլաբանությունն իր ընդգրկուն ծավալով ու ընդհանրացման մեծ ուժով հաջողությամբ կարող է բնաբան ծառայել նաև Կանտի այս աշխատության համար ընդհանրապես:

[7] **Кант И.** Критика практического разума, стр. 38.

նկատմամբ «ֆանտաստիկ արհամարհանքը...»: Մարդը չի կարող ոչ մեկի ստրուկը լինել:

Կանտի այս գաղափարները, որոնք ներթափանցված են խոր հումանիզմով և կազմում են նրա մարդասիրական ուսմունքի էությունը, թեև ուղղված են, առաջին հերթին, մարդուն ստրկացնող ֆեոդալամիապետական կարգերի դեմ, սակայն ունեն անանց նշանակություն և այժմեական են նաև մեր օրերում:

Սակայն այստեղ միաժամանակ պարզորոշ երևան են գալիս Կանտի բարոյագիտական ուսմունքի ու հումանիզմի ապրիորի-իդեալիստական ակունքները: Եթե, օրինակ, լուսավորիչները մարդու բարոյական վարքագծի հիմքերը որոնում էին նյութական ու բարոյական միանգամայն իրական շահերի մեջ և փորձում էին բխեցնել դրանցից, ապա Կանտը մերժում է բարոյագիտության ամեն մի ուտիլիտար, զգայական հիմնավորում: Իր կողմից ձևակերպված բարոյական հիմնական օրենքն ու նրա պահանջները կապելով «գործնական բանականության» կողմից առաջադրվող պոստուլատների հետ, կամքի ազատության ու հոգու անմահության գաղափարը հայտարարելով «զուտ բանականության» տեսանկյունից անապացուցելի՝ Կանտը դրանով իսկ մարդասիրական իդեալների իրականացումը հիմնովին կտրեց իրական ուժերից, երկրային հիմքից: Եվ պատահական չէ, որ նա Աստծուն հռչակեց իբրև «համաշխարհային բարոյական ներդաշնակության գերագույն պատճառ»:

Նրա այն պնդումը, թե այս կամ այն արարքը դադարում է բարոյական լինելուց, եթե նրա հեղինակն առաջնորդվում է որևէ էմպիրիկ, «արտաքին» նկատառումով, որ բարոյական կարող են համարվել միայն այն գործողությունները, որոնք կյանքի են կոչվում միայն իդեալական մղումներով, այսպես կոչված վերացական կամքի թելադրանքով (որն իր հերթին նրա կողմից դիտվում է որպես բացարձակապես ապրիորի, էմպիրիկ գործողության մեջ ոչ մի հիմք չունեցող բան), բարոյականը լրիվ կերպով կտրում է իրական հասարակական հարաբերություններից, հասարակական պրակտիկայից, երջանկության և բարօրության համար մարդկանց ու դասակարգերի պայքարից:

Դրա հետ մեկտեղ Կանտի հումանիզմը ծայրահեղ վերացական է ու հայեցողական: Մարդուն ոչ թե որպես միջոցի, այլ որպես նպատակի վերաբերվելու՝ իր հիմքում ճիշտ ու բանական պահանջը զրկվում է իրական բովանդակությունից, դառնում վերացական ցանկություն, քանի որ մասնավոր սեփականությունը նա դիտում էր որպես մարդու հավիտենական, անկապտելի իրավունք: Հասարակական հակամարտություններով լի ու դաժան շահա-

գործման վրա հիմնված հասարակության մեջ Կանտը մարդկանց կոչ էր անում միմյանց նկատմամբ լինել գթասիրտ ու բարի: Նրա հումանիզմի հենց այդ՝ հասարակական-դասակարգային հակասությունները շրջանցող, հաշտարար կողմերն էլ նրան դարձրին զենք ռեֆորմիստների ձեռքին՝ ընդդեմ աշխատավորական լայն զանգվածների շահերի, ընդդեմ իսկական հումանիզմի:

Լուսավորիչների նման Կանտը մեծ տեղ էր տալիս բարոյական դաստիարակության հարցերին: «Կրոնը միայն բանականության սահմաններում» աշխատության մեջ նա հանդես է գալիս ուղղակի հարցադրմամբ՝ ինչպիսի՞ն է մարդը իր բնությամբ՝ բարի՞, թե՞ չար: Ըստ Կանտի՝ մարդն իր էությամբ հակված է դեպի չարը: Սակայն դրա հետ մեկտեղ մարդն օժտված է բարության ձիրքերով, և հենց բարոյական դաստիարակությունն է կոչված ապահովելու բարու հաղթանակը դեպի չարը մարդկային հակման նկատմամբ: Ընդ որում գլխավորը Կանտի համար մարդու վարքագիծն է, նրա արարքները: Պրակտիկ բանականությունը, ըստ նրա, բարձր է տեսական բանականությունից, և գիտելիքը միայն այն դեպքում արժեք ունի, երբ այն օգնում է մարդուն՝ դառնալու ավելի մարդկային, իրագործելու բարու գաղափարը:

Կանտը նոր ժամանակների փիլիսոփաներից առաջինն էր, որ մատնանշեց աշխատանքի օտարված բնույթը բուրժուական հասարակարգի պայմաններում: Չօգտագործելով «օտարում» տերմինը՝ նա ֆիքսում է «օտարման» բուն իրողությունը, ցույց տալիս մասնավոր սեփականության և աշխատանքի բաժանման հակասական ազդեցությունը մարդու և հասարակության ճակատագրի վրա: Ըստ նրա, այստեղ են թաքնված և՛ առաջադիմությունը, և՛ դեգրադացիան: Հասարակական սուր կոլիզիա է ծնում արդեն իսկ այն իրողությունը, որ մշակույթը, որը, ըստ Կանտի, լայն իմաստով այն ամենն է, ինչ հակադրվում է բնությանը ու ստեղծված է մարդու կողմից, և որի իսկական կոչումը մարդկությանը ծառայելն է, անհատի համակողմանի զարգացումը՝ դավաճանում է իր սոցիալական դերին, դառնում անտարբեր մարդու ճակատագրի նկատմամբ: Սոցիալական տարբեր խմբերի բաժանված հասարակության մեջ նա անխուսափելիորեն ծնում է հասարակական կոլիզիա ու անտագոնիզմ, որոնց ուժով և առաջ է ընթանում: Անհավասարությունը դառնում է մշակույթի գործողության մեխանիզմ. ոմանք ճնշման մեջ են պահում մյուսներին՝ մեծամասնությանը բաժին հասցնելով ծանր աշխատանքն ու չնչին հաճույքները:

Նա խորաթափանցորեն նկատեց այն սուր հակասությունը, որ գոյություն ունի աշխատանքի՝ որպես բուն մարդկային գործունեության, անհատի

ստեղծագործական ուժերի բարձրագույն դրսևորման և այն կոնկրետ ձևի միջև, որով այն հանդես է գալիս որոշակի սոցիալ-պատմական պայմաններում, մարդու շահագործման վրա հիմնված հասարակարգերում՝ դառնալով մարդու համար խորթ, օտարված գործունեություն: Ելնելով վերոհիշյալ նախադրյալից՝ յուրաքանչյուր աշխատանք Կանտը բնութագրում է որպես «հարկադրական գործունեություն»՝ զուրկ հաճույքից ու գրավչությունից: Դրա հետևանքով աշխատավոր մարդը ստիպված է մշտապես հաղթահարել նողկանքը դեպի աշխատանքը, որն անխուսափելիորեն նրա վզին է փաթաթում կարիքը: Սակայն մատնանշելով այն իրական պատմական փաստը, որ աշխատանքը կապիտալիզմի օրոք ձեռք է բերում մարդու կենսական ուժերի օտարման բնույթ, Կանտը միաժամանակ գտնում էր, որ անհատի ստեղծագործական ազատությունը պահպանվում է միայն գեղարվեստական գործունեության, իրականության գեղարվեստական արտացոլման պրոցեսում:

Այս առումով հետաքրքրական է Կանտի կողմից արվեստի ու արհեստի կամ որ միևնույնն է՝ գեղարվեստական ու ֆիզիկական գործունեության փոխհարաբերության հարցի վերլուծությունը: Նա արվեստը սկզբունքորեն սահմանազատում է արհեստից: ***Արվեստը,*** գտնում է Կանտը, պետք է խստորեն տարբերել ***արհեստից***, քանզի առաջինն ազատ գործունեություն է, իսկ երկրորդը՝ վաստակի միջոց, որն ունի վարձու բնույթ: Արվեստին նայում են որպես մի զբաղմունքի, որը հաճելի է ինքնին, մինչդեռ արհեստը դիտվում է որպես այնպիսի մի հարկադրական զբաղմունք, որն ինքնին ծանր է ու տհաճ՝ զուրկ ամեն մի գրավչությունից, եթե հաշվի չառնենք վարձատրության հեռանկարը[8]:

Այստեղ, թեև մշուշապատ ու միստիֆիկացված երանգով, տրվում է աշխատանքի այն ձևի քննադատությունը, որը բխում է շահագործողական կարգի, հատկապես կապիտալիզմի բնույթից: Սակայն աշխատանքի օտարման սոցիալ-պատմական իրողությունը Կանտի մոտ չգտնելով ռացիոնալ բացատրություն՝ նրան ներկայանում է սոցիալական անտինոմիայի, արտապատմական հակասության տեսքով: Չկարողանալով ինչպես հարկն է ըմբռնել օտարման պատճառներն ու նրա սոցիալ-դասակարգային էությունը՝ հակամարտ դասակարգերի բաժանված հասարակությանը ներհատուկ օտարումը Կանտն ընկալեց որպես օտարման ընդհանրական ձև, սոցիալ-պատմական տոտալ իրողություն:

Այս ամենով հանդերձ՝ աշխատանքի օտարման մասին իր ուսմունքով Կանտը հիմք դրեց աշխատանքի կապիտալիստական ձևի այն քննադա-

[8] Տե՛ս **Кант И**. Соч., т. 5, М., 1965, стр. 319:

տությանը, որը հետագայում զարգացրեց Հեգելը:

Արժեքավոր են Կանտի՝ հումանիստական լիցքով տոգորված մտքերը բարոյականության և քաղաքականության փոխհարաբերության հարցի մասին: Ի հակադրություն Մաքիավելու, որը ելնում էր «նպատակն արդարացնում է միջոցները» կանոնից, Կանտը պահանջում էր, որ քաղաքական գործունեությունը խարսխվի բարոյականության սկզբունքների վրա: Քաղաքական մորալիստին, ով բարոյականությունը հարմարեցնում է իր քաղաքականությանը, նա հակադրում է բարոյական քաղաքական գործչին, որը մտահոգ է, որպեսզի քաղաքականությունը ղեկավարվի բարոյական սկզբունքներով: Առաջին տիպի գործիչներին նա հեգնանքով տալիս էր «բաժանիր, որ տիրես» տիպի խորհուրդներ, երկրորդներին նա մատնացույց էր անում բարոյականության ու քաղաքականության զուգակցման եղանակը:

Իր էությամբ խորապես հումանիստական է պետությունների ու ժողովուրդների համընդհանուր դաշինքի ստեղծման, պատերազմների վերացման և աշխարհում «հավերժական խաղաղության» հաստատման մասին Կանտի գաղափարը, որը նրա սոցիալական փիլիսոփայության կարևոր դրույթներից է (տե՛ս, մասնավորապես, նրա «Հավերժական խաղաղություն» տրակտատը):

Կանտի համոզմամբ մարդկության առջև ծառացած մեծագույն խնդիրը համընդհանուր իրավական հասարակության ստեղծումն է: Դրա համար անհրաժեշտ է, որ ազատ պետություններն ու ազատ ժողովուրդները կնքեն «հավերժական խաղաղության» պայմանագիր, որի արդյունքում և կձևավորվի պետությունների համաշխարհային դաշնությունը: Ըստ Կանտի՝ «հավերժական խաղաղությունը» միայն իդեալ չէ, այն միաժամանակ իրականանալի գաղափար է, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

Մերժելով «գերբնական ուժերի» միջոցով պատմական պրոցեսն իմաստավորելու կրոնահիդեալիստական ավանդույթը՝ Կանտը կարևորում է հասարակության զարգացման բնական պատճառների հետազոտությունը:

Պատմությունը, ըստ Կանտի, մարդկանց ակտիվ ու նպատակամետ գործունեության արդյունք է: Մարդիկ, օժտված լինելով գիտակցությամբ ու կամքով, ստեղծում են այն, ինչ բնության մեջ գոյություն չունի և ազատվում բնական անհրաժեշտության կապանքներից: Նրանք կարող են կասեցնել կամ արագացնել հասարակական առաջադիմությունը: Դրա հետ մեկտեղ Կանտը մերժում էր բռնության ցանկացած դրսևորում, հատկապես բռնի միջոցներով, հեղափոխական ճանապարհով իշխանափոխության փորձերը:

Չի կարելի ակնկալել, գտնում էր Կանտը, որ թագավորները փիլիսոփայեն, իսկ փիլիսոփաները թագավորներ դառնան: Սա նաև ցանկալի չէ, քանզի իշխանական իրավունքներն անխուսափելիորեն խաթարում են բանականության ազատ գործունեությունը: Սակայն մյուս կողմից՝ թագավորները և ինքնակալական ժողովուրդները չպետք է թույլ տան, որ վերանա կամ լռի փիլիսոփաների դասը, այլ պետք է նրանց ազատորեն գործելու և իրենց տեսակետներն արտահայտելու հնարավորություն ընձեռեն, ինչը էապես կնպաստի հասարակական կյանքի ռացիոնալ կազմակերպմանը, նրա բնականոն ընթացքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Իմանուիլ Կանտի (1724-1804) հումանիզմի առանձնահատկությունների քննական վերլուծությանը, համաշխարհային հումանիստական մտքի զարգացման մեջ Կանտի բացառիկ ավանդի իմաստավորմանը: Հատուկ տեղ է հատկացված ինչպես իր ամբողջության մեջ Կանտի փիլիսոփայության հումանիստական ուղղվածության մատնանշմանը, այնպես էլ նրա էթիկական ուսմունքի ու դրա առանցքը կազմող հիմնական բարոյական օրենքի՝ «կատեգորիկ իմպերատիվի» հումանիստական բովանդակության բացահայտմանը: Միաժամանակ հոդվածում անդրադարձ է կատարված Կանտի հումանիզմի մի շարք դրույթների ակտուալությանը մեր օրերում, ինչպես նաև մատնանշված են այդ հումանիզմի առանձին թերություններ ու սահմանափակություններ՝ պայմանավորված գերմանացի մեծ մտածողի ապրած պատմական դարաշրջանի յուրահատկություններով:

Բանալի բառեր - փիլիսոփայություն, հումանիզմ, տեսական բանականություն, գործնական բանականություն, մորալ, էմպիրիկ հակում, բարոյական գործողություն, հիմնական բարոյական օրենք՝ «կատեգորիկ իմպերատիվ», նպատակ, միջոց, դուալիզմ, կամքի ազատություն, «հավերժական խաղաղություն», համաշխարհային բարոյական ներդաշնակություն:

О ХАРАКТЕРНЫХ ОСОБЕННОСТЯХ ГУМАНИЗМА КАНТА

ГРИГОР АСАТРЯН

Статья посвящена критическому анализу характерных особенностей гуманизма основоположника классической немецкой философии Иммануила

Канта (1724-1804), осмыслению его исключительного вклада в развитие мировой гуманистической мысли. В ней уделено особое место как характеристике общегуманистической направленности философии Канта в целом, так и раскрытию гуманистического содержания его этического учения и особенно основного нравственного закона – «категорического императива», являющегося стержнем этого учения. В статье одновременно обращено внимание на актуальность ряда положений гуманизма Канта в наши дни, а также указаны отдельные недостатки и ограниченности этого гуманизма, обусловленные исторической спецификой эпохи великого немецкого мыслителя.

Ключевые слова - философия, гуманизм, теоретический разум, практический разум, мораль, эмпирическая склонность, моральное действие, основной нравственный закон - «категорический императив», цель, средство, дуализм, свобода воли, «вечный мир», всемирная моральная гармония.

THE CHARACTERISTIC FEATURES OF KANT'S HUMANISM

GRIGOR ASATRYAN

The article is dedicated to the critical investigation of the characteristic features of humanism according to Immanuel Kant (1724 -1804), the founder of German classic philosophy and to the assessment of Kant's outstanding contribution to the development of international humanist thought.

Considerable attention is payed to reveal the humanistic inclination of Kant's philosophy as a whole, and his ethical teachings, the exposure of the humanistic sense of an absolute moral law – "the categorical imperative" which forms the axis of his ethical teachings as well. In the article mention is also made of the continuity of Kant's certain concepts of humanism up to our days. The drawbacks and the limitations of Kant's humanistic concepts, are accorded to the features of that historical age.

Key words **–** philosophy, humanism, theoretical reason, practical reason, moral, empiric disposition, moral activity, basic moral law, "the categorical imperative", objective, means, dualism, freedom of will, "eternal peace", international moral harmony.